Հավելված

Հայաստանի Հանրապետության
Ազգային ժողովի խորհրդի
2017 թվականի հուլիսի 11-ի N 009-Լ որոշման

(առ 2018 թվականի հունվարի 12-ի ԱԺԽՈ-004-Լ որոշման փոփոխություններով և լրացումներով)

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ

1. Սույնով կարգավորվում են միջազգային խորհրդարանական կազմակերպություններում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատվիրակությունների (այսուհետ՝ Պատվիրակություններ) կազմավորման և գործունեության հետ կապված հարաբերությունները՝ նպատակ ունենալով ապահովելու Պատվիրակությունների գործունեության արդյունավետությունը:

2. Պատվիրակություններն իրենց գործունեության ընթացքում ղեկավարվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, միջազգային կազմակերպությունների կանոնադրություններով, «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով, «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի որոշումով, Ազգային ժողովի խորհրդի որոշումներով, Ազգային ժողովի նախագահի որոշումներով և կարգադրություններով:

3. Պատվիրակության անդամներն իրենց գործունեությունն իրականացնում են անձնական պատասխանատվության, գործընկերային կապեր հաստատելու, նախաձեռնողականության, հաշվետվողականության, շարունակականության, հետևողականության և մասնակցային սկզբունքներին համապատասխան:

4. Պատվիրակությունների անդամները պարտավոր են տիրապետել համապատասխան միջխորհրդարանական համագործակցության ձևաչափի ընթացակարգային բոլոր փաստաթղթերին (կանոններ, կանոնակարգեր, աշխատակարգեր և այլն):

5. Պատվիրակությունների անդամները պարտավոր են ընդգրկվել տվյալ ձևաչափի կառուցվածքային մարմիններում (հանձնաժողով, կոմիտե, խումբ և այլն), իսկ հնարավորության դեպքում՝ նաև նշված մարմինների ղեկավար պաշտոններում, ինչպես նաև հնարավորինս ակտիվ գործունեություն ծավալել տվյալ ձևաչափի աշխատանքային բոլոր ուղղություններում՝ որպես զեկուցող, մոնիտորինգային խմբի կամ դիտորդական առաքելության անդամ և այլն:

6. Տվյալ ձևաչափի կառուցվածքային մարմիններում ընդգրկվելու հնարավորության բացակայության դեպքում Պատվիրակության անդամները Հայաստանի Հանրապետության շահերն իրացնելու և գործընկերային կապեր ձեռք բերելու նպատակով պարտավոր են մասնակցել տվյալ ձևաչափի կառուցվածքային մարմինների նիստերին (այդ թվում՝ առանց քվեարկության իրավունքի) կամ հանդես գալ ելույթով:

7. Հայաստանի Հանրապետության շահերն իրացնելու և գործընկերային կապեր ձեռք բերելու կամ դրանք ամրապնդելու նպատակով Պատվիրակության անդամները տվյալ ձևաչափում առկա քաղաքական խմբերի, կուսակցական խմբակցությունների հետ հարաբերություններում ցուցաբերում են մասնակցություն, ակտիվություն և նախաձեռնողականություն:

8. Պատվիրակության անդամները ցուցաբերում են նախաձեռնողականություն և ակտիվություն համընդհանուր՝ միջազգային, օրակարգային հարցերում:

9. Հայաստանի Հանրապետության շահերին առնչվող հարցերի վերաբերյալ Պատվիրակությունը պարտավոր է նախապես մշակել հստակ մարտավարություն և հետևողական աշխատանք տանել դրա իրականացման ուղղությամբ (ելույթների, հարցերի, ուղղումների պատրաստում, գործընկերների ներգրավում, պատասխանատվության բաշխում և այլն): Այդ նպատակով Պատվիրակության ղեկավարի նախաձեռնությամբ պարտադիր հրավիրվում է աշխատանքային խորհրդակցություն:

10. Պատվիրակություններում ներգրավված պատգամավորները պետք է մշտապես շփումների մեջ լինեն տվյալ միջխորհրդարանական ձևաչափում ներգրավված երկրների պատվիրակությունների, լրատվամիջոցների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, հայկական համայնքների, հասարակական և կրոնական կազմակերպությունների հետ:

11. Պատվիրակությունների կազմերում ընդգրկվող խմբակցությունների պատգամավորների հիմնական և փոխարինող կազմում ներկայացվածության համամասնությունները սահմանում է Ազգային ժողովի խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ)՝ հիմք ընդունելով միջազգային խորհրդարանական կազմակերպությունների կանոնադրությունները, ինչպես նաև Ազգային ժողովի խմբակցությունների պատգամավորների քանակը: Խորհուրդը կարող է նաև սահմանել ռոտացիոն կարգ՝ հնարավորություն ընձեռելով Պատվիրակության կազմում չընդգրկված խմբակցության ներկայացուցիչներին որոշակի պարբերականությամբ ընդգրկվելու համապատասխան Պատվիրակության կազմում:

12. Ազգային ժողովի նախագահի առաջարկությամբ Ազգային ժողովի խմբակցությունների ղեկավարները երկշաբաթյա ժամկետում Խորհրդին ներկայացնում են համապատասխան Պատվիրակությունների թեկնածություններ: Թեկնածությունները ներկայացվում են Ազգային ժողովի համապատասխան խմբակցության անդամներից, ովքեր տիրապետում են համապատասխան միջազգային խորհրդարանական կազմակերպության աշխատանքային լեզուներից որևէ մեկին: Թեկնածությունները ներկայացվում են Ազգային ժողովի համապատասխան խմբակցությանը Պատվիրակությունում հատկացված տեղերի թվով: Թեկնածությունները ներկայացնելիս Ազգային ժողովի խմբակցությունների ղեկավարները հնարավորինս հաշվի են առնում սեռերի արդարացի ներկայացվածության սկզբունքը:

13. Եթե Ազգային ժողովի խմբակցությունը սահմանված ժամետում չի ներկայացնում թեկնածություններ, ապա Խորհուրդը, հիմք ընդունելով սույն կարգի 11-րդ կետի պահանջները, Ազգային ժողովի համապատասխան խմբակցության տեղերը հատկացնում է Ազգային ժողովի այլ խմբակցության:

14. Եթե առաջարկությունների հիման վրա Պատվիրակության ձևավորվող կազմը չի համապատասխանում տվյալ միջազգային խորհրդարանական կազմակերպության կանոնադրության կամ սույն կարգի 4-րդ և 12-րդ կետերի պահանջներին, ապա Խորհուրդը կատարում է համապատասխան փոփոխություններ Պատվիրակության կազմում:

15. Միջազգային խորհրդարանական կազմակերպության աշխատանքներին մասնակցելու նպատակով գործուղվող Պատվիրակության կազմը Պատվիրակության ղեկավարը

գրավոր համաձայնեցնում է Ազգային ժողովի նախագահի հետ՝ ելնելով Պատվիրակության կազմավորման նպատակահարմարությունից և աշխատանքների կազմակերպման արդյունավետությունից:

16. Միջազգային խորհրդարանական կազմակերպությունների լիագումար նիստերին և հանձնաժողովների հանդիպումներին, ինչպես նաև կազմակերպության հետ առնչվող այլ միջոցառումներին Պատվիրակության անդամների մասնակցության վերաբերյալ Պատվիրակությունների ղեկավարները գրավոր տեղեկացնում են Ազգային ժողովի նախագահին, միջոցառման անցկացման նախատեսված օրվանից ոչ ուշ, քան 21 օր առաջ Ազգային ժողովի նախագահն այդ մասին եռօրյա ժամկետում տեղեկացնում է Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովին (այսուհետ՝ Հանձնաժողով): Բացառություն են կազմում նախապես չծրագրված միջոցառումները և հանդիպումները:

(լր.12.01.2018, ԱԺԽՈ-004-Լ)

17. Պատվիրակության փոխարինող կազմից որևէ անդամի գործուղման նպատակահարմարությունը յուրաքանչյուր դեպքում Պատվիրակության ղեկավարի ներկայացմամբ որոշում է Ազգային ժողովի նախագահը՝ ելնելով տվյալ միջազգային խորհրդարանական կազմակերպության օրակարգային հարցերից:

18. Պատվիրակությունների ղեկավարներին (անհրաժեշտության դեպքում՝ նրանց փոխարինողներին) նշանակում է Խորհուրդը՝ համապատասխան Պատվիրակության կազմից:

19. Եթե այլ բան նախատեսված չէ միջազգային խորհրդարանական կազմակերպության կանոնադրությամբ, ապա միջազգային խորհրդարանական կազմակերպության հանձնաժողովներում (մարմիններում) Պատվիրակության անդամների ներգրավվածության հարցը որոշում է Պատվիրակության ղեկավարը՝ իրազեկելով Ազգային ժողովի նախագահին և Հանձնաժողովի նախագահին:

(փոփ.12.01.2018, ԱԺԽՈ-004-Լ)

20. Պատվիրակությունների ղեկավարները կազմակերպում և համակարգում են համապատասխան Պատվիրակության աշխատանքները, ինչպես նաև իրականացնում սույն կարգով նախատեսված այլ գործառույթներ:

21. Պատվիրակությունների քարտուղարին նշանակում է Ազգային ժողովի նախագահը՝ Ազգային ժողովի աշխատակազմի համապատասխան վարչության աշխատակիցներից՝ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղարի ներկայացմամբ՝ համաձայնեցնելով Պատվիրակության ղեկավարի հետ:

(լր.12.01.2018, ԱԺԽՈ-004-Լ)

22. Պատվիրակության քարտուղարն իրականացնում է Պատվիրակության գործավարությունը, սույն կարգով սահմանված գործառույթներ, ինչպես նաև կատարում Պատվիրակության ղեկավարի հանձնարարականները:

23. Պատվիրակությունների կազմերում ընդգրկված Ազգային ժողովի պատգամավորների մասնակցությունը Պատվիրակության հետագա աշխատանքներին դադարեցվում է, եթե՝

1) տվյալ պատգամավորն այդ մասին գրավոր դիմել է Խորհրդին.

2) դադարել կամ դադարեցվել են նրա պատգամավորական լիազորությունները.

3) պատգամավորը չի կատարում սույն կարգով սահմանված պահանջները.

4) խմբակցությունը հետ է կանչում իր առաջարկած և Պատվիրակության կազմում ընդգրկված խմբակցության պատգամավորին.

5) պատգամավորի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանքը:

Սույն կետով նախատեսված դեպքերում խմբակցությունը մեկշաբաթյա ժամկետում ներկայացնում է համապատասխան թեկնածություն:

24. Պատվիրակության քարտուղարը Պատվիրակության անդամներին, որպես կանոն, գործուղումից առնվազն 14 օր առաջ տրամադրում է տվյալ կազմակերպությանը և քննարկման ենթակա հարցերին առնչվող նյութեր, տեղեկանքներ և աշխատանքային այլ փաստաթղթեր:

25. Ազգային ժողովի նախագահի կամ Պատվիրակության ղեկավարի նախաձեռնությամբ Պատվիրակության գործուղումից ոչ ուշ, քան երեք աշխատանքային օր առաջ ըստ անհրաժեշտության կարող է հրավիրվել աշխատանքային խորհրդակցություն՝ Հանձնաժողովի նախագահի և Ազգային ժողովի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանման աշխատակիցների մասնակցությամբ:

(փոփ.12.01.2018, ԱԺԽՈ-004-Լ)

26. Աշխատանքային խորհրդակցությանը կարող են հրավիրվել արտաքին գործերի նախարարի՝ համապատասխան ուղղությունը համակարգող տեղակալը և (կամ)

արտաքին գործերի նախարարության աշխատակազմի համապատասխան վարչության պետը, շահագրգիռ պետական կառավարման մարմինների ու կազմակերպությունների ներկայացուցիչներ:

27. Սույն կարգի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 10-րդ կետերով և 23-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված դեպքերում Պատվիրակության ղեկավարը, խորհրդակցելով Հանձնաժողովի նախագահի հետ, կարող է Ազգային ժողովի խմբակցություններին գրավոր առաջարկել փոխարինել Պատվիրակության կազմում ընդգրկված պատգամավորին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ազգային ժողովի նախագահին: Այդ դեպքում Ազգային ժողովի նախագահը կարող է հրավիրել հատուկ աշխատանքային խորհրդակցություն:

(փոփ.12.01.2018, ԱԺԽՈ-004-Լ)

28. Պատվիրակության աշխատանքների արդյունավետությունն ապահովելու, Պատվիրակության անդամների գործողությունները համակարգելու և կազմակերպական հարցերը քննարկելու նպատակով Պատվիրակությունների ղեկավարները կազմակերպում և անցկացնում են Պատվիրակության նիստեր:

29. Պատվիրակության նիստերը վարում է Պատվիրակության ղեկավարը կամ նրան փոխարինողը: Պատվիրակության ղեկավարի հանձնարարությամբ Պատվիրակության նիստերը սահմանված կարգով արձանագրվում և պահպանվում են: Պատվիրակության նիստի արձանագրությունն ստորագրում են նիստը վարողը և Պատվիրակության քարտուղարը:

30. Միջազգային խորհրդարանական կազմակերպությունների նիստերի ընթացքում Պատվիրակության ղեկավարը նիստերի ընթացքի, նիստերում ընդունված որոշումների կամ Հայաստանի Հանրապետության շահերին առնչվող ցանկացած հարցի վերաբերյալ պարբերաբար տեղեկատվություն է ներկայացնում Ազգային ժողովի նախագահին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն:

31. Օտարերկրյա պետություն գործուղման մեկնած Պատվիրակությունը վերադառնալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, Պատվիրակությունների անդամներն իրենց գործունեության վերաբերյալ գրավոր զեկույցը ներկայացնում են Պատվիրակության ղեկավարին: Պատվիրակության ղեկավարն ամփոփում է Պատվիրակության անդամների զեկույցները

և տասնօրյա ժամկետում «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի որոշման հավելվածի 145-րդ կետով նախատեսված կարգով ներկայացնում է Ազգային ժողովի նախագահին, ով ուղարկում է Հանձնաժողովի նախագահին: Հաշվետվությունը պետք է բաղկացած լինի հետևյալ բաժիններից.

1) մինչև միջազգային խորհրդարանական կազմակերպության նստաշրջանը կատարված աշխատանքներ.

2) միջազգային խորհրդարանական կազմակերպության նստաշրջանի ընթացքում կատարված աշխատանքներ.

3) միջազգային խորհրդարանական կազմակերպության նստաշրջանից հետո անելիքներ.

4) այլ աշխատաքներ (այդ թվում՝ գործընկերային բազայի թարմացում):

(փոփ.12.01.2018, ԱԺԽՈ-004-Լ)

32. Միջազգային խորհրդարանական կազմակերպությունների նիստերից վերադառնալուց հետո՝ տասնօրյա ժամկետում, Պատվիրակությունները պարտավոր են հանդես գալ ճեպազրույցով կամ մամուլի ասուլիսով, որը կազմակերպում է Ազգային ժողովի աշխատակազմը:

33. Ազգային ժողովի նախագահը պարբերաբար, սակայն ոչ ուշ, քան տարին մեկ անգամ հրավիրում է խորհրդակցություններ, որոնց մասնակցում են Հանձնաժողովի նախագահը, բոլոր Պատվիրակությունների ղեկավարները՝ Պատվիրակությունների գործունեության ընթացքում ծագած խնդիրները քննարկելու, Պատվիրակությունների գործունեության արդյունքները ամփոփելու և միասնական մոտեցումներ մշակելու համար:

34. Պատվիրակության վերադարձից հետո Ազգային ժողովի նախագահն անհրաժեշտության դեպքում կարող է հրավիրել Պատվիրակության աշխատանքային խորհրդակցություն Հանձնաժողովի նախագահի մասնակցությամբ, որի ընթացքում Պատվիրակության ղեկավարը հանդես է գալիս հաղորդմամբ:

35. Տեղեկատվության փոխանակման, միջազգային խորհրդարանական կազմակերպություններում համակարգված և արդյունավետ աշխատանք ապահովելու նպատակով Հանձնաժողովի նախագահի առաջարկությամբ Ազգային ժողովի նախագահը, ըստ անհրաժեշտության, հրավիրում է խորհրդակցություն Պատվիրակությունների ղեկավարների մասնակցությամբ:

(խմբ.12.01.2018, ԱԺԽՈ-004-Լ)

36. Պատվիրակությունների գործունեության կազմակերպական, նյութատեխնիկական, ֆինանսական և մասնագիտական-տեղեկատվական ապահովումն իրականացնում է Ազգային ժողովի աշխատակազմը:

Հայաստանի Հանրապետության
Ազգային ժողովի աշխատակազմի
ղեկավար-գլխավոր քարտուղար **Ա. Սաղաթելյան**